**Արձանագրություն 3**

**ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.08.2022թ. ժամը 14:00-ին:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

**Վ. Հարությունյան** – ՖՆ ծրագրերի իրականացման վարչության պետ,

***Անդամներ***

**Վ. Պողոսյան** – ՖՆ ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ,

**Հ. Ղազարյան** - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

**Ա. Մարտիրոսյան** - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

**Կ. Սիրունյան** – ՖՆ ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի տնտեսվար,

***Գնումները համակարգող***

**Վ. Սիմոնյան** - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության մասնագետ:

1. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. «Գապ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2. «ԱԼՊԱՆՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում չկա նշում առ այն, որ մասնակիցը թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն: Հավելված 1.3-ի՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.5 կետի «ա», «բ», «գ» ենթակետերից ոչ մեկում նշում չի կատարվել, 4.7 կետի 4.7.2 ենթակետը լրացված չէ:

3. «ԹՈՓ-ՏԵԽ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում նշված է, որ կից ներկայացվում է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի, սակայն վերջինս կցված չէ (հրավերով ևս նման պահանջ առկա չէ): Հավելված 1.3-ի՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.3.1 կետը լրացված է «Հայաստանի», իսկ 4.3.2 կետը՝ «Հանրապետություն Ք.

Երևան». Տեղի է ունեցել վրիպակ, որի արդյունքում ստացվել են գոյություն չունեցող պետություն և համայնք: Նույն հավելվածի 4.5 կետի «ա», «բ», «գ» ենթակետերից ոչ մեկում նշում չի կատարվել: Միևնույն ժամանակ, մասնակիցը չի ներկայացրել հրավերի 2.6 կետով պահանջվող իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

4. «Հիմնաքարեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում բացակայում է չափաբաժնի համարը, որին մասնակիցը դիմել է, չկա նշում առ այն, որ մասնակիցը թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն: Նույն հավելվածում բացակայում է իրական շահառուներ պարունակող կայքէջի հղումը: Մասնակցի ներկայացրած հավելված 1-ում և 2-ում բոլոր հնարավոր տեղերում նշված է, որ մասնակիցը դիմել է բաց մրցույթի, այնինչ «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգը իրականացվում է գնանշման հարցմամբ: Հավելված 1-ը և հավելված 2-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հավելված 2-ում՝ գնային առաջարկում չափաբաժնի անվանումը սխալ է լրացված, իսկ հայտում բացակայում է հրավերի 2.6 կետով պահանջվող մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

5. «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.3-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.1.6 կետում որպես գրանցման երկիր, իսկ 4.3.1 և 4.4.1 կետերում որպես պետություն նշված է «Հայաստան» /հավանաբար մասնակիցը նկատի է ունեցել «Հայաստանի Հանրապետություն»/, իսկ 4.1.5 կետում՝ «քաղաքացիություն» դաշտում նշված է տվյալ անձի ազգությունը քաղաքացիության փոխարեն:

6. «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.3-ի՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.2.2 կետում լրացված է նույնականացման քարտի համար, այն դեպքում, երբ 4.2.1 կետում որպես տվյալ փաստաթղթի տեսակ նշված է «անձնագիր», 4.2.5 կետը լրացված չի: Նույն հավելվածի 4.5 կետի «ա», «բ», «գ» ենթակետերից ոչ մեկում նշում չի կատարվել, 4.7.2 կետում նշում չկա, փոխարենը նշումը կատարված է 4.7.3 կետում: 1.3.2 կետում՝ որպես հայտարարագրի էջերի քանակ նշված է 8, բայց ստացված հայտարարագիրը բաղկացած է 9 էջից, իսկ 4.1.5 կետում՝ «քաղաքացիություն» դաշտում նշված է տվյալ անձի ազգությունը քաղաքացիության փոխարեն: Միևնույն ժամանակ, մասնակիցը չի ներկայացրել հրավերի 2.6 կետով պահանջվող իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

7. «Նաիրա Խաչատրյան» ԱՁ-ն չի ներկայացրել հրավերի 2.6 կետով պահանջվող իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

8. «ՎԱՀԱԳՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում նշված է, որ մասնակիցը իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է կայքէջի հղման միջոցով, սակայն հղումը բացակայում է, իսկ նշված տեղեկատվությունը ներկայացվել է հավելված 1.3-ով: Հավելված 1.3-ի՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.3.3 կետում բացակայում է հայտարարագիրը

ներկայացնող անձի ստորագրությունը: Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշիվը լրացված չի հրավերի պահանջներին համապատասխան. Բացի այն, որ լրացված չէ ամբողջ արժեքի դաշտը, լրացված ընդհանուր արժեքների գումարը կազմում է 23.5 մլրդ դրամ, որը հազար անգամ ավելին է, քան մասնակցի ներկայացրած գնային առաջարկը: Բացի այդ, շեղումն ավելին է, քան հրավերին կցված թերությունների մասին ակտով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից, ինչը հակասում է հրավերի պայմաններին: Արդյունքում միավորի արժեքները նույնպես սխալ են ստացվել:

9. «Երկնաքեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում նշված է, որ մասնակիցը իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է կայքէջի հղման միջոցով, սակայն հղումը բացակայում է, իսկ նշված տեղեկատվությունը ներկայացվել է հավելված 1.3-ով: Հավելված 1.3-ի 4.3.3 և 4.4.3 կետերը լրացված չեն, իսկ 4.5 կետի «ա», «բ», «գ» ենթակետերից ոչ մեկում նշում չի կատարվել: Միևնույն ժամանակ, մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ հրավերում նշված է եղել, որ գները ներառում են ԱԱՀ-ն, իսկ այստեղ ԱԱՀ-ն ներառված չէ գների մեջ, ներկայացված է առանձին: Բացի այդ, շեղումն ավելին է, քան հրավերին կցված թերությունների մասին ակտով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

10. «Մարզանդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.3-ի՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.5.2 կետը լրացված չէ: Հավելված 2-ում՝ գնային առաջարկում չափաբաժնի անվանումը սխալ է լրացված: Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշիվը լրացված չի հրավերի պահանջներին համապատասխան. շեղումն ավելին է, քան հրավերին կցված թերությունների մասին ակտով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Արդյունքում միավորի արժեքները նույնպես սխալ են ստացվել:

11. «ԹՈՐԳ»ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.2-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված, հայտարարագրի 4.5 կետի «ա», «բ», «գ» ենթակետերից ոչ մեկում նշում չի կատարվել: Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ մասնակիցը փոխել է նշված հավելվածի համարակալումը՝ հրավերով նշված 1.3-ը դարձրել է 1.2, սակայն հավելված 1-ում որպես իրական շահառուների հայտարարագիր հղում է տվել հավելված 1.2-ին՝ այդպիսով չկատարելով ոչ մի էական փոփոխություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

## 2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, «ԹՈՐԳ» ՍՊԸ-ին, «Երկնաքեր» ՍՊԸ-ին «Գապ Շին» ՍՊԸ-ին, «Թոփ-Տեխ» ՍՊԸ-ին, «ԱԼՊԱՆՈ» ՍՊԸ-ին, «Վահագն Շին» ՍՊԸ-ին, «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ին և «Նաիրա Խաչատրյան» ԱՁ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները,

2. «Հիմնաքարեր» ՍՊԸ-ի և «Մարզանդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

**3. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

«ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի օգոստոսի 23-ին ժամը 12:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Պողոսյան

_____ Հ. Ղազարյան

_____ Ա. Մարտիրոսյան

_____ Կ. Սիրունյան

Գնումները համակարգող՝ _____ Վ. Սիմոնյան